

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԵՂԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԲԵԳԼԱՐՅԱՆ Մ.Հ.¹, ՀԱԿՈՒԲՅԱՆ Ա.Ա.¹, ՓԵՐԻՒՆՆՅԱՆ Ա.Վ.^{2,3}

¹Երևանի Մ. Զեքացու անվ. պետական բժշկական համալսարանի դեղագործության կառավարման ամբիոն, Երևան, Հայաստան

²«Դարմանոթեստ լաբորատորիա» ՍՊԸ, Երևան, Հայաստան

³«Նորթ Մարաշ» բժշկական կենտրոն, Երևան, Հայաստան

Ներկայումս բազմաթիվ առողջապահական խնդիրների արժեքնայողական լուծումը հիմնված է դեղերի ռացիոնալ կիրառման վրա: Դեղերի առողջական խնդիրները բարելավելու ունակությունը կախված է որակից, ապահով լինելուց, հասանելիությունից, մատչելիությունից, ինչպես նաև՝ ճիշտ կիրառումից: Սույն հետազոտության նպատակն է՝ ներկայումս գնահատել Հայաստանի Հանրապետության դեղագործական շուկան՝ ուսումնասիրելով հիմնական դեղերի առկայությունը, ջններիկ դեղերի գնային տարբերությունը և մի շարք այլ կարևոր ցուցանիշներ:

Դեղերի մասին անհրաժեշտ տեղեկությունն ընտրվել է ՀՀ գործող չորս խոշոր մեծածախ դեղագործական կազմակերպությունների գնացուցակներից: Հետազոտության իրականացման նպատակներով օգտագործվել է «Հիմնական դեղերի ազգային ցանկը» և Anatomical Therapeutic Chemical (ATC) համակարգը: Ըստ հետազոտության արդյունքների, մեր ուսումնասիրած բոլոր մեծածախ դեղագործական կազմակերպությունները միասին առաջարկում էին դեղերի հիմնական ցանկում ընդգրկված 309 անուն դեղերից միայն 168-ը (54,4%), որոնք ներկրվում են 42 տարբեր երկրներից: Հիմնական դեղերի տեղական արտադրությունը կազմում է 13,4%, բոլորը՝ ջններիկ: Ընդհանուր ներմուծված դեղերի մեջ ջններիկ դեղերը կազմում էին 76.8%: Ջններիկ դեղերի գնային տարբերությունը ակնհայտ էր. SD-1816.6, Mean-1496.6, 95% CI [621-2372]: Ընդհանուր առմամբ գերակշռում էին հակավարակիչ դասին պատկանող դեղերը (28.2%): 2.73%: Ներմուծված դեղերի դեղաչափը տարբերվում էր «Հիմնական դեղորայքի ազգային ցուցակ»-ում հաստատված դեղաչափից:

Իրականացված հետազոտությունը նպատակ է ունեցել գնահատել ներկայիս դեղագործական շուկան և վերծանել գոյություն ունեցող խնդիրները, ինչը կարող է հիմք հանդիսանալ հետագա աշխատանքների համար: Հայաստանում դեղերի մատակարարման կառավարման և կարգավորման մեջ գոյություն ունեցող առկա խնդիրները խոչընդոտ են հանդիսանում Առողջապահության համաշխարհային կազմակերպության չափանիշները և պահանջները լիովին բավարարելու համար, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է հանրային և մասնավոր դեղագործական շուկաների վերաբերյալ ավելի մանրակրկիտ տեղեկատվություն: Հայաստանում ջններիկ դեղերի առաջխաղացումը ապահովում է դրանց իրացումը, առանց հաշվի առնելու որակն ու գինը:

Սույն շարունակական հետազոտությունը նպատակ ունի հետազայում ևս ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության դեղագործական շուկան՝ համեմատելով հիմնական դեղերի ներմուծման և արտահանման ծավալների հետ, ջններիկ դեղերի արժեքը՝ միջազգային ստանդարտներին համեմատ և գնահատել այդ դեղերի հասանելիությունը՝ բնակչության կողմից: